# Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

## Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև փոխադարձ առևտրում անուղղակի հարկերի գանձման սկզբունքների մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ռուսաստանի Դաշնության կառավարությունը, հետագայում՝ Կողմեր,

ղեկավարվելով 1994 թ. ապրիլի 15-ի ազատ առևտրի գոտու ստեղծման մասին Համաձայնագրի և Ազատ առևտրի գոտու ստեղծման մասին 1994թ. ապրիլի 15-ի Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 1999թ. ապրիլի 2-ի Արձանագրության դրույթներով,

ձգտելով տնտեսական ինտեգրացիայի հետագա խորացմանը, տնտեսվարող սուբյեկտների համար հավասար հնարավորությունների ստեղծմանը և բարեխիղճ մրցակցության պայմանների սահմանմանը,

նկատի ունենալով միջազգային առևտրի հանրաճանաչ նորմերը և կանոնները,

համաձայնեցին ներքոշարադրյալի մասին.

### Հոդված 1
### Ընդհանուր սահմանումներ

Սույն Համաձայնագրի նպատակների համար օգտագործվում են հետևյալ հասկացությունները.

*«անուղղակի հարկեր»* - ավելացված արժեքի հարկ և ակցիզ (ակցիզային հարկ կամ ակցիզային գանձում),

*«գրոյական դրույքաչափ»* -ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) վրա անուղղակի հարկերի զրո տոկոսի հավասար դրույքաչափը, որը համարժեք է հարկումից ազատմանը կամ անուղղակի հարկերի փոխհատուցմանը և հարկատուի համար նշանակում է գալիք վճարումների հաշվին վճարած հարկերի համար հաշվառման իրավունք կամ նրանց փոխհատուցում,

*«նշանակման երկիր»* - պետություն, որի մաքսային տարածք ապրանքները ներմուծվում են սպառման նպատակով,

*«տնտեսվարող սուբյեկտներ»* - Կողմերի պետությունների հարկատուներ:

Հոդված 2

Համաձայնագրի առարկան

Սույն Համաձայնագրի առարկան է հանդիսանում անուղղակի հարկերի գանձման սկզբունքների սահմանումը՝ Կողմերի պետությունների տնտեսվարող սուբյեկտների միջև արտաքին առևտրական գործառնությունները իրականացնելիս:

Հոդված 3

Ապրանքների արտահանման ժամանակ հարկման սկզբունքը

Արտահանման մաքսային ռեժիմի տակ գտնվող ապրանքները, որոնք արտահանվում են մի Կողմի պետության մաքսային տարածքից և ներմուծվում են մյուս Կողմի պետության մաքսային տարածք, հարկվում են անուղղակի հարկերով գրոյական դրույքաչափով՝ Կողմերի օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխան:

Սույն կանոնը չի տարածվում բնական գազի և նավթի վրա, ներառելով կայուն գազային կոնդենսատը:

## Հոդված 4

## Ապրանքների ներմուծման ժամանակ հարկման սկզբունքը

Մի Կողմի պետության մաքսային տարածք ներմուծվող ապրանքները, որոնք արտահանվել են մյուս Կողմի պետության մաքսային տարածքից, հարկվում են անուղղակի հարկերով նշանակման երկրում՝ վերջինի ազգային օրենսդրության համապատասխան:

## Հոդված 5

## Ծառայությունների մատուցման ժամանակ անուղղակի հարկերի կիրառման կարգը

1. Ծառայությունների մատուցման ժամանակ անուղղակի հարկերի կիրառման կարգը ձևակերպվում է առանձին արձանագրությամբ: Մինչ տվյալ արձանագրության գործողության մեջ մտնելը ծառայությունները անուղղակի հարկերով հարկվում են Կողմերի պետությունների օրենսդրությանը համապատասխան, բացառությամբ հետևյալ ծառայությունների.

ա/ մի Կողմի պետության մաքսային տարածքից մյուս Կողմի պետության մաքսային տարածք արտահանվող ապրանքների փոխադրման և սպասարկման ծառայությունները, ներառյալ առաքման, բարձման, բեռնաթափման և փոխաբեռնման ծառայությունները,

բ/ տարանցիկ ապրանքների փոխադրման և սպասարկման ծառայությունները, այն պայմանով, որ ապրանքների առաքման կամ նշանակման կետերը գտնվում են Կողմերի պետությունների տարածքներում, ներառյալ առաքման, բարձման, բեռնաթափման և վերաբեռնման ծառայությունները,

գ/ մի Կողմի պետության մաքսային տարածքից մյուս Կողմի պետության մաքսային տարածք ուղիղ և հակադարձ ուղղություններով ուղևորների և բեռների փոխադրման ծառայությունները:

2. Սույն հոդվածի 1-ին կետի ա/, բ/ և գ/ ենթակետերում թվարկված ծառայությունները հարկվում են ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափով այն պետությունում, որի հարկատուները մատուցում են այնպիսի ծառայություններ՝ Կողմերի սահմանած կանոններին համապատասխան՝ ծառայությունների մատուցման փաստի հաստատման դեպքում:

## Հոդված 6
## Հսկողություն ապրանքների տեղափոխման և անուղղակի հարկերի վճարման նկատմամբ

1. Ապրանքների տեղափոխման, հաշվառման իրականացման և տեղեկատվության փոխանակման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով Կողմերը կօգտագործեն Անկախ պետությունների համագործակցության արտաքին տնտեսական գործունեության Ապրանքային անվանացանկը / ԱՊՀ ԱՏԳ ԱԱ /:

2. Կողմերի պետությունների մաքսային տարածքներ ներմուծվող ապրանքներից անուղղակի հարկերը գանձվում են նշանակման երկրի մաքսային կամ հարկային մարմինների կողմից:

## Հոդված 7
## Համաձայնագրի կատարումը

1. Սույն Համաձայնագիրը չի խոչընդոտում Կողմերի իրավունքը կիրառելու անհրաժեշտ միջոցներ ներքին արտադրողների և ազգային շուկայի շահերի պաշտպանության համար՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին և նորմերին համապատասխան:

2. Սույն Համաձայնագրի կիրառման կամ մեկնաբանման հետ կապված տարաձայնությունները Կողմերը կլուծեն բանակցությունների ճանապարհով:

3. Կողմերը, անհրաժեշտության դեպքում, խորհրդատվություններ կանցկացնեն սույն Համաձայնագրի իրագործման ընթացքի գնահատման և նրա մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու նպատակահարմարության համար:

## Հոդված 8

## Համաձայնագրում փոփոխությունների և լրացումների կատարումը

Կողմերը, փոխադարձ համաձայնությամբ, սույն Համաձայնագրում կկատարեն անհրաժեշտ լրացումներ և փոփոխություններ, որոնք կձևակերպվեն Համաձայնագրի անբաժանելի մասը հանդիսացող առանձին Արձանագրություններով:

Արձանագրություններն ուժի մեջ են մտնում նրանց ուժի մեջ մտնելու համար բոլոր անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման վերաբերյալ Կողմերի վերջին ծանուցումը ստանալու օրվանից:

## Հոդված 9

## Համաձայնագրի գործողության ժամկետը

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում 1994 թ. ապրիլի 15-ի ազատ առևտրի գոտու ստեղծման մասին Համաձայնագրով և 1994թ. ապրիլի 15-ի ազատ առևտրի գոտու ստեղծման մասին Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 1999թ. ապրիլի 2-ի Արձանագրությամբ նախատեսված ազատ առևտրի ռեժիմից հանումների մասին Արձանագրության ուժի մեջ մտնելու հետ միաժամանակ՝ Կողմերի կողմից անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման տարուն հաջորդող տարվա հունվարի 1-ից:

2. Սույն Համաձայնագիրը կնքվում է հինգ տարի ժամկետով և ինքնաբերաբար երկարաձգվում է հետագա հնգամյա ժամկետներով, եթե Կողմերից որևէ մեկը, հերթական ժամկետի ավարտից առնվազն 6 ամսից առաջ, դիվանագիտական ուղիներով, գրավոր չծանուցի նրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է 2000թ. հոկտեմբերի 20 -ին քաղաք Մոսկվայում երկու բնօրինակով, յուրաքանչյուրը հայերեն և ռուսերեն լեզուներով, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից`

Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից`

# СОГЛАШЕНИЕ

между Правительством Республики Армения и Правительством Российской Федерации о принципах взимания косвенных налогов во взаимной торговле

Правительство Республики Армения и Правительство Российской Федерации, именуемые в дальнейшем Сторонами,

руководствуясь положениями Соглашения о создании зоны свободной торговли от 15 апреля 1994 г. и Протокола от 2 апреля 1999 г. о внесении изменений и дополнений в Соглашение о создании зоны свободной торговли от 15 апреля 1994 г.,

стремясь к дальнейшему углублению экономической интеграции, созданию равных возможностей для хозяйствующих субъектов и установлению условий добросовестной конкуренции,

принимая во внимание общепризнанные нормы и правила международной торговли, согласились о нижеследующем:

## Статья 1
## Общие определения

Для целей настоящего Соглашения используются следующие термины:

"косвенные налоги" - налог на добавленную стоимость и акциз (акцизный налог или акцизный сбор);

"нулевая ставка" - ставка косвенных налогов на товары (работы, услуги), равная нулю процентов, что равнозначно освобождению от налогообложения или возмещению косвенных налогов, и означает для налогоплательщика право на зачет уплаченных налогов в счет предстоящих платежей или их возмещение;

"страна назначения" - государство, на таможенную территорию которого товары ввозятся для потребления;

"хозяйствующие субъекты" - налогоплательщики государств Сторон.

## Статья 2
## Предмет Соглашения

Предметом настоящего Соглашения является установление принципа взимания косвенных налогов при осуществлении внешнеторговых операций между хозяйствующими субъектами государств Сторон.

### Статья 3
### Принцип налогообложения при вывозе товаров

Товары, помещенные под таможенный режим экспорта, вывозимые с таможенной территории государства одной Стороны и ввозимые на таможенную территорию государства другой Стороны, облагаются косвенными налогами по нулевой ставке в соответствии с порядком, устанавливаемым законодательством Сторон.

Настоящее правило не распространяется на природный газ и нефть, включая стабильный газовый конденсат.

### Статья 4
### Принцип налогообложения при ввозе товаров

Ввозимые на таможенную территорию государства одной Стороны товары, которые вывезены с таможенной территории государства другой Стороны, облагаются косвенными налогами в стране назначения в соответствии с ее национальным законодательством.

### Статья 5
### Порядок применения косвенных налогов при оказании услуг

1. Порядок применения косвенных налогов при оказании услуг оформляется отдельным протоколом. До введения в действие такого протокола услуги облагаются косвенными налогами в соответствии с законодательством государств Сторон, за исключением следующих услуг:

а) услуги по транспортировке и обслуживанию товаров, вывозимых с таможенной территории государства одной Стороны на таможенную территорию государства другой Стороны, включая услуги по экспедированию, погрузке, разгрузке и перегрузке;

б) услуги по транспортировке и обслуживанию транзитных товаров, при условии, что пункты отправления или назначения товаров расположены на территории государств Сторон, включая услуги по их экспедированию, погрузке, разгрузке и перегрузке;

в) услуги по перевозке пассажиров и багажа с таможенной территории государства одной Стороны на таможенную территорию государства другой Стороны в прямом и обратном направлении.

2. Услуги, перечисленные в подпунктах "а", "б" и "в" пункта 1 настоящей статьи, облагаются налогом на добавленную стоимость по нулевой ставке в государстве, налогоплательщики которого оказывают такие услуги, при подтверждении факта их оказания в соответствии с порядками, устанавливаемыми Сторонами.

**Статья 6**
**Контроль за перемещением товаров и уплатой косвенных налогов**

1. В целях осуществления контроля за перемещением товаров, ведения учета и обмена информацией Стороны будут использовать Товарную номенклатуру внешнеэкономической деятельности Содружества Независимых Государств (ТВ ВЭД СНГ).

2. Косвенные налоги по товарам, ввозимым на таможенные территории государств Сторон, взимают таможенные органы страны назначения или ее налоговые органы.

**Статья 7**
**Исполнение Соглашения**

1. Настоящее Соглашение не препятствует праву Сторон в соответствии с общепризнанными принципами и нормами международного права применять необходимые меры для защиты интересов внутренних производителей и национального рынка.

2. Разногласия в связи с толкованием или применением настоящего Соглашения Стороны будут решать путем переговоров.

3. Стороны будут при необходимости проводить консультации для оценки хода реализации настоящего Соглашения и целесообразности внесения в него изменений и дополнений.

**Статья 8**
**Внесение изменений и дополнений в Соглашение**

Стороны при взаимном согласии вносят в настоящее Соглашение необходимые дополнения и изменения, которые оформляются отдельными Протоколами, являющимися неотъемлемой частью Соглашения.

Протоколы вступают в силу со дня получения последнего уведомления Сторон о выполнении всех необходимых для их вступления в силу внутригосударственных процедур.

**Статья 9**
**Срок действия Соглашения**

1. Настоящее Соглашение вступает в силу одновременно с вступлением в силу Протокола об изъятиях из режима свободной торговли, предусмотренного Соглашением о создании зоны свободной торговли от 15 апреля 1994 г. и Протоколом от 2 апреля 1999 г. о внесении изменений и дополнений в Соглашение о создании зоны свободной торговли от 15 апреля 1994 г., с 1 января года, следующего за годом выполнения Сторонами необходимых внутригосударственных процедур.

2. Настоящее Соглашение заключается сроком на пять лет и автоматически продлевается на последующие пятилетние сроки, если ни одна из Сторон не уведомит в письменной форме по дипломатическим каналам не менее чем за 6 месяцев до истечения очередного срока о своем намерении прекратить его действие.

Совершено в г. Москве «20» октября 2000 г. в двух подлинных экземплярах, каждый на армянском и русском языках, причем оба текста имеют одинаковую силу.

| | |
|---|---|
| За Правительство<br>Республики Армения | За Правительство<br>Российской Федерации |